## ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

### ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

#### Կատու :

ԸՆՏԱՆԻ կատուին յատկութիւններն ու բնաւորութիւնները ամենուն յայտնի են · յայտնի է նաև օգտակարութիւնը, որով տներուն մէջէն մկները կը ջարդէ կը հալածէ : Զարմանալին աս է որ մարդիկ աս կենդանւոյս վրայ իրարու ամենևին ներհակ կարծիք ունին · վասն զի ոմանք կը սիրեն, ոմանք ալ սաստիկ կ'ատեն · և ընդհանրապէս ով որ շնիկը կը սիրէ՝ կատու չսիրեր, կատու սիրողն ալ շան երեսը չուզեր տեսնել : Անուանի հեղինակներ եղած են Եւրոպացւոց մէջ որ կատուին վրայ գովեստներ՝ ջատագովութիւններ գրած են, ինչպէս Փէթրարքա, Տասսօ, Սոննինի · ոմանք ալ չարաչար պարսաւեր են, ինչպէս Պիւֆոն, Տոզիէ, Մորալթէլլի · կ'երևնայ թէ երկու կողմի պատճառներն ալ զօրաւոր են · բայց պարսաւողները աւելի իրաւունք ունին ըսելու ամենևին չես տարակուսիր՝ երբոր մտածես աս կենդանւոյս մէկ երկու գարշելի յատկութիւնները, որ են անտանելի ապերախտութիւն, անձնասէր շողոքորթութիւն և խարդախ դաւաճանութիւն : Եւ որովհետև մարդկային ընկերութեան մէջ աս ախտերէն աւելի ատելի ախտ չկրնար ըլլալ, ով որ կատուին աս յատկութիւնները գիտէ՝ հարկաւ չկրնար զինքը սիրել : Մատենագրին մէկը կ'ըսէ թէ հին ատենի Շուիցերացիք (որ Հելուետիացիք կ'ըսուէին) կատուն ինքնիշխանութեան նշան սեպելով իրենց ազատութեանը նշան ըրեր էին · աս խօսքը իրաւ ալ ըլլայ, չեմ կարծեր թէ հիմակուան Շուիցերացիք ալ կատուն բռնեն իրենց կնիքներուն օրինակ և նշան :

Հոս դրուած պատկերին մէջինը վայրի կատու է, որ Ասիոյ, Եւրոպայի ու Ամերիկայի մեծամեծ անտառներուն մէջ կը գտնուի · ասիկայ սովորաբար ընտանի կատուին մէկ ու կէս մեծութիւնն ունի, բայց անկէ շատ աւելի կատաղի է · այնպէս որ ասիկայ որսալը շատ վտանգաւոր բան է : Թէ որ նեղն ըլլայ, կամ պզտիկ վէրք մը առնէ ու չսատկի, կատաղաբար կը ցատքէ դիմացինին վրայ ու բզիկ բզիկ ընելու մտքով անանկ կը զարնուի վրան որ անկարելի կ'ըլլայ ձանկէն ազատիլը :

Անուանի կատուներուն մէջ շատ անուանի է Անկիւրիոյ կատուն՝ խոշորութեանն ու մորթին փափկութեանը համար : Չինու երկիրը տեսակ մը կատու կայ որ ականջները դէպ 'ի վար կախուած են : Պարսկաստանի մէջ կատուներ կան որ բուրդերնին մետաքսի պէս փափուկ է, պոչերնին ալ այնպէս հաստ ու բրդոտ՝ որ սկիւռ[1] կենդանւոյն կը նմանին :

Բնագէտները որչափ որ կատուի նըման գազաններ կան՝ ինչպէս առիւծ, վագր, լուսանուն, ինձ, ընձառիւծ են, կատուի ցեղ կը սեպեն · վասն զի ընդհանրապէս ասոնք ամէնն ալ նոյն յատկութիւններն ունին՝ իրարմէ աւելի կամ պակաս :

Կատուին շանը հետ ունեցած թշնամութիւնը այնչափ է որ առակ եղած է անհաշտ թշնամութեանց ու կռուով մէկ տան մէջ բնակողներուն ռամկօրէն շուն ու կատու կը նմանին ըսել : Լաֆոնթէն գաղղիացին աս բանս հետագայ առակովն ալ կը բացատրէ :

Կռիւ շանց ընդ կատուաց, և կատուացն ընդ մկանց :

Ուր տեղի չէք ժամանակ  
Յորում չիցեն լեալ կռիւք ·  
Եթէ խնդրես օրինակ,  
Ըզքև իսկ կան բիւրք անթիւք ·

1 Սընճապ :



(Վայրի կատու։)

Ի տարերաց ընկերըն առնեմ թէ կամիս,
Զի ցանգ անհաշտք հակառակին իրերաց.
Նոյնպէս և բնաւ արարածք այսր աշխարհիս
Յար 'ի մրցմանս են յար 'ի կռիւ 'ի հերձուած։

Երբեմն ուրեմն էր ապարանք մեծաշէն
Ուր բազմութիւն շանց և կատուաց գտանէր.
Բայց անչափ կարգք եդան 'ի տանըն տեառնէն
Զի այլ ոչ ևս անդ կռուոյ ձայն ոք լսէր։
Ընդ պաշտամունք իւրաքանչիւր սահմանեալ
Եւ կերակուրք չափով կշռով բաշխէին,
Եւ որ կազէր յանկարծ՝ գանիւ հարուածեալ
Ըզյանցուածոյն վրէժ լուծանէր զարժանին։
Եւ էր զնոսին այնուհետև տեսանել
Ոչ իբր ըզշունս և ըզկատուս ոխերիմ,
Այլ զի զմիմեամբք առնէին միշտ ելևել
Իբրև եղբարք եղբօրորդեակք մրտերիմ։

Բայց տևեաց ոչ ընդ երկար
Խաղաղութիւնն այն և սէր.
Զի թանըն չէր հաւասար
Կամ ոսկր ումեք պակասէր.
Այլք յաւելուն թէ և քած
Կորեանցն 'ի հոգս 'ի շընտան
Քաղցեալ նըքթէր զի չէր հաց,
Եւ թէ կատուք զայն կերան:
Ընդ յաղմըկէն վեր 'ի վայր
Պալատն ողջոյն դըղըրդէր.
Հընչէր գաւիթն և դահլիճ,
Թընդայր մառան խոհարան,
Շանցն և կատուաց յուժգին ձիչ
Դրացիքն ամէն խռովեցան.
Կատուաց կանչիւն և բողոք
Բզկանմնայն էր նորոց,
Եւ շանց հաջիւն անողոք
Մի էր ցասմամբ 'ի զայրուց:
Խըրփընկեցից փաստաբանն
Ասէր թէ դատ պարտ է տալ,
Եւ 'ստ օրինաց տանուտեառն
Ի պատուհաս շանց փութալ.
Սակայն եկ տես նոր արկած,
Զի այն թըղթեանն ամենայն
Մուրհակք և գիրք օրինաց
Զորս ծառայից պալատանն
Էր ամփոփեալ 'ի մի խորշ,
Մըկանց էին լեալ կըրծօն.
Դարձեալ բողոք բարձրագոչ.
Բարձցին մըկունք, օ́ն և օն:

Յայնժամ կատու մի կատու ծեր խորագէտ
Յանձն առ ձրգնել ունել զմըկունս մի առ մի,
Մինչև անհետ լեալ ջընջեսցի նոցին ձետ.
Եւ տանուտէրն հանգեաւ հոգոց առ վայր մի:

Եկից դարձեալ ես յիմ բան,
Թէ ընդ երկնիւք չիք էակ
Որ չունիցի ախոյեան
Իւրում բնութեան ընդդիմակ.
Այլ դու ջանաս վայրապար
Եթէ զպատճառսըն խընդրես.
Զոր տէրն արար՝ լաւ արար,
Այսչափ միայն գիտեմ ես:
Այո, գիտեմ և զայս յաճախ պատահար,
Զի զոչընչից կագեն բազումք չարաչար.
Մարդիկ մարդիկ, ըղձեզ պիտէր տես յութսուն
Դարձեալ յըղել 'ի ձեր նախկին դըպրատուն:


